Humanitarian Crisis and Children's Children's Rights
Մարդասիրական ճգնաժամ և երեխաների իրավունքների խախտում

Since December 12th, 2022, Azerbaijan has blocked the Goris-Stepanakert road, which is the only road connecting Artsakh to Armenia. As a result, 120,000 people have been isolated from the rest of the world. Due to the blockade, essential supplies such as food, medicine, and other necessities have been unable to reach the Artsakh Republic for the past weeks. Currently, Artsakh has no means of communication available by land or air.

The blockade is having severe consequences on the well-being of people who live in Artsakh, violating their internationally guaranteed rights and threatening their lives and safety. People in Artsakh have been unable to receive proper medical care and have been deprived of the ability to move freely between Artsakh and the internationally recognized borders of Armenia. The restriction of movement has been exacerbated by the denied access to emergency vehicles and other modes of vital transportation. The continuation of the blockade is causing a humanitarian crisis, including the loss of life and the potential for further conflict and increased tension in the region.

With this and other regular actions, the Azerbaijani side grossly violates the UN Universal Declaration of Human Rights, which defines the right of every individual to receive an education. These actions have had a detrimental effect on the right to education of around 30,000 children, guaranteed by the UN Convention on the Rights of the Child. The blocking of the Goris-Stepanakert road has hindered the ability of Armenian and international educational organizations to operate properly. Many of their employees are unable to return to their communities or are under siege in Artsakh.

In addition to blocking the road, Azerbaijan has taken actions designed to make life impossible for the 120,000 people in Artsakh. This includes the deliberate suspension of Artsakh's gas supply in winter conditions, which left tens of thousands of children without heating and hot water for several days. As a result, most educational institutions closed. Frequent interruptions of classes in kindergartens, schools, and universities hinder students from learning and doing so in a safe environment, as guaranteed by international standards.

The blockade of Artsakh is creating a humanitarian crisis for the residents of Artsakh. The undersigned organizations strongly condemn the prolonged and inhumane policies of the Azerbaijani authorities, motivated by ethnic discrimination and hatred of Armenians, thereby violating the UN Convention against Discrimination in

Education. International organizations and foreign diplomatic missions are responsible for acting decisively and preventing discriminatory treatment. It is clear that only strong and targeted criticism and action can ensure the safety, well-being, and right to education of the 30,000 children living in Artsakh. Allowing these human rights violations to continue with total impunity only encourages further crimes and atrocities against civilians. The international community cannot stand by and tolerate such human rights violations.

A group of organizations working in the field of education and science call on international actors, institutions, and foreign diplomatic missions to fulfill their responsibilities and take strong and targeted action to restore the right to education for the children of Artsakh, ensure a safe, educational environment and prevent discrimination against the entire population. It is essential to promptly reestablish safe communication via Goris-Stepanakert highway, which is the only land route connecting Artsakh to Armenia. As an additional measure, it is necessary to provide air transportation in cases where the use of this route is necessary for urgent humanitarian purposes.

We stand ready to support and share our experience in developing short-term and long-term action plans to implement these measures.

Sincerely,

Undersigned:

Teach For Armenia
Union of Advanced Technology Enterprises
TUMO Center for Creative Technologies
Ayb Educational Foundation
Armenian Educational Foundation
Armenian General Benevolent Union (AGBU)
Children of Armenia Charitable Fund
“Shirakatsy Lyceum” International Scientific-Educational Complex” CJSC
reArmenia Collaboration Platform
Armenian Missionary Association of America (AMAA) Armenia
KASA Swiss Humanitarian Foundation
Foundation for Armenian Science and Technology (FAST)
"I" education fund
“Armenia’s Technology Future” Initiative
"One Voice" Armenian Association of Independent Schools
Effective Government Foundation

Դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը երկկողմ ուղղությամբ արգելափակել է Արցախը Հայաստանի և արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը, ինչի հետևանքով 120.000 մարդ հայտնվել է մեկուսացման մեջ: Արցախ Հանրապետություն չեն մատակարարվում սնունդ, դեղորայք և առաջին անհրաժեշտության իրեր:

Շրջափակման պատճառով խախտվում են Արցախի ժողովրդի միջազգայնորեն երաշխավորված հիմնարար իրավունքները: Լրջորեն վտանգված են մարդկանց կյանքը և անվտանգությունը, նրանք զրկված են ազատ տեղաշարժի, պատշաճ բուժօգնություն ստանալու և այլ իրավունքներից, չի իրականացվում տրանսպորտային միջոցների, այդ թվում՝ շտապօգնության մեքենաների տեղաշարժ, արգելափակված է կենսական անհրաժեշտության ապրանքների մատակարարումը: Այս իրավիճակի տևական շարունակականությունը արդեն իսկ անխուսափելիորեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի, որի հետևանքը մարդկային նոր կորուստներն են, նոր պատերազմն ու տարածաշրջանում լարվածության աճը:

Ադրբեջանական կողմն այս և պարբերաբար իրականացվող այլ գործողություններով կոպտորեն խախտում է իր իսկ կողմից վավերացված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որով սահմանվում է նաև յուրաքանչյուր անհատի կրթություն ստանալու իրավունքը: Փաստացի, պարբերաբար խաթարվում է 30.000 երեխայի կրթության իրավունքը, որը երաշխավորված է նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով: Արցախն արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհի արգելափակման արդյունքում մի շարք հայաստանյան և միջազգային կրթական կազմակերպություններ չեն կարողանում պատշաճ ձևով կատարել իրենց աշխատանքները: Վերջիններիս բազմաթիվ աշխատակիցներ կա՛մ չեն կարողանում վերադառնալ իրենց համայնքներ, կա՛մ գտնվում են շրջափակման մեջ՝ հենց Արցախում:

Ընդ որում, Արցախն ամբողջական շրջափակման մեջ է. չկա որևէ տեսակի հաղորդակցություն՝ ցամաքային կամ օդային:

Այս ամենի հետ միասին, պետք է հաշվի առնել նաև, որ ճանապարհն արգելափակելուն զուգահեռ, Ադրբեջանը ձեռնարկում է այնպիսի քայլեր, որոնք ուղղված են լրացուցիչ զրկանքներ պատճառելուն և 120,000-ից ավելի մարդկանց բնականոն կյանքը անհնարին դարձնելուն: Խոսքը վերաբերում է ձմռան ամիսներին պարբերաբար գազի մատակարարումն Արցախ դիտավորությամբ դադարեցնելուն, որի պատճառով տասնյակ հազարավոր երեխաներ մի քանի օր բացարձակ զրկվել էին ջեռուցումից, տաք ջրից, անհրաժեշտ սննդամթերքից, ինչպես նաև դադարեցվել էր բոլոր կրթական հաստատությունների աշխատանքը: Ադրբեջանական կողմը չի խորշում կիրառել իր ունեցած ողջ գործիքակազմը՝ սահմանային գյուղերի դպրոցների դասընթացները խափանելուց մինչև քաղաքացիների կյանքը վտանգող գործողություններ: Մանկապարտեզներում, դպրոցներում և համալսարաններում դասերի հաճախակի ընդհատումները խոչընդոտում են միջազգայնորեն երաշխավորված որակյալ կրթության ու անվտանգ կրթական միջավայրի ապահովումը:

Ներքոստորագրյալ կազմակերպությունները խստորեն դատապարտում են Ադրբեջանի իշխանությունների հակամարդասիրական և անմարդկային այս տևական քաղաքականությունը, որն ունի էթնիկ խտրականության հիմքեր՝ ազգությամբ հայերի նկատմամբ (Արմենոֆոբիա) և խախտում է ՄԱԿ-ի Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիան:

Շրջափակման ամեն հաջորդ օրն էլ ավելի է բարդացնում իրավիճակն արցախահայության համար և ևս մեկ քայլով խորացնում մարդասիրական աղետը: Միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա դիվանագիտական առաքելությունները պետք է գործեն առավել ակտիվ՝ իրենց միջազգային պատասխանատվությանը համապատասխան, և կանխեն խտրական վերաբերմունքը: Այլևս ակնհայտ է, որ միայն միանշանակ և հասցեական քննադատությունը, պատասխանատվության միջոցներն ու գործողությունները կարող են երաշխավորել Արցախում բնակվող 30,000 երեխաների կյանքն ու անվտանգությունը, նրանց կրթության իրավունքը: Անպատժելիությունը միայն խրախուսում է իրավունքների առավել կոպիտ ոտնահարումներն ու հանցանքները խաղաղ բնակչության նկատմամբ: Քաղաքակիրթ աշխարհը չպետք է հանդուրժի մարդու հիմնարար իրավունքների նմանօրինակ խախտումները:

Այս համատեքստում կրթության և գիտության ոլորտի մի շարք կազմակերպությունների կողմից ձևավորված խումբը, պարբերաբար բախվելով Արցախի հայ աշակերտների կրթության շարունակականության պահպանման և հասանելիության ապահովման դեմ ադրբեջանական գործողություններին, միջազգային կառույցներից ու օտարերկրյա դիվանագիտական առաքելություններից պահանջում է իրենց մանդատի շրջանակներում վերականգնել Արցախի երեխաների կրթության իրավունքը, ապահովել անվտանգ կրթական միջավայր և կանխել խտրական վերաբերմունքը: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է հրատապ կերպով վերականգնել Արցախը Հայաստանին կապող ցամաքային միակ ճանապարհով անվտանգ հաղորդակցությունը, որ գործել է մինչև 2022թ. դեկտեմբերի 12-ին Ադրբեջանի կողմից ճանապարհի արգելափակումը: Որպես լրացուցիչ միջոց՝ անհրաժեշտ է ապահովել օդային մարդասիրական հաղորդակցություն այն դեպքերի համար, երբ այդ ճանապարհի օգտագործումն անհրաժեշտ է հրատապ մարդասիրական նպատակներով:

Այս պահանջների կյանքի կոչման համար պատրաստ ենք աջակցել և մեր ունեցած փորձով կիսվել կարճաժամկետ և երկարաժամկետ գործողությունների ծրագրի մշակման համար:

Հարգանքով՝

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ
«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ
Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն
«Այբ» կրթական հիմնադրամ

Հայ Կրթական Հիմնարկություն
Հայ բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ)
«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ
«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» ՓԲԸ
«ռեԱրմենիա» համագործակցության հարթակ
Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության (AMAA) Հայաստանի մասնաճյուղ
«ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ
Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ (FAST)
«Ես» կրթական հիմնադրամ
«Մեկ ձայն» անկախ դպրոցների հայկական ասոցիացիա ՀԿ
«Հայաստանի տեխնոլոգիական ապագա» նախաձեռնություն
Արդյունավետ Կառավարություն Հիմնադրամ